

6196

1910

N 56

343



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՍԿԵՐ» ԱՄՍԱԳՐԻ

№ 9.

ԿԱՐԵ ԼԱՎՈՎ

## ԵՐԿԻՐՆ ԵՒ ԳԻՍԱՍԴՂԸ



2004

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵՔՏՐԱՆԱԿԱՆ ՏՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆԱԳՐԻ ՊՈԽԻՑ, Դ

1910

2010

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՅԵՐ» ԱՐԱՐԴԻ

83-93

Ե-81


ԱՅ

No 9.

ԿԱՐԼ ԷՎԱՆԴՐ

## ԵՐԿԻՐՆ ԵՒ ԳԻՍԱՍՏՂԸ

1002  
4153



Թ Ի Ֆ Լ Ի Ս  
ԵԼԵՔՏՐԱԿԱՐԳ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՍԵՍԻՑԻ. ՊՈԼԻ 7  
1910

6014

Եղանակ առաջինը երես ԱՄ  
Կայունացնելու առաջին առաջարկը  
Հայրական գործութեաւութեան պահ  
Ուժութեան պահութեան բարեպահը

28 Մայիս 1919. թ.

Այն պատմութիւնը, որ ուզում եմ անել,  
վերին աստիճանի նշանաւոր է: Շատ, շատ հա-  
րիւրաւոր տարիներ է շարունակւում նա: Այն  
մարդը, որ ծնւել է այդ պատմութեան սկզբնա-  
ւորութեան հետ միաժամանակ, վաղուց արդէն  
մեռել է և գետնի մէջ է պառկած՝ դեռ նրա  
վերջը չը լսած, բնչ եմ ասում, մինչև անգամ  
այնքան շապրած, որ կարողանար լսել այդ պատ-  
մութեան իսկ հետաքրքրական կէտը:

Այդ պատմութիւնը սկսել է և շարունակ-  
ւում է տիեզերքի ազատ տարածութեան մէջ,  
այստեղ, ուր լողում են աստղերը և ուր այն-  
պէս ցուրտ է, որ մորթուց կարած, ամենատաք  
մուշտակը մի հասարակ, գգգղւած շապկից աւելի  
չի տաքացնի մեր մարմինը:

Եւ տիեզերքի այդ աստղալից, ցուրտ տա-  
րածութիւնը այնքան անհուն է և անսահման, որ  
մինչև այժմ դեռ ոչ ոք չի կարողացել որոշել  
նրա մեծութիւնը:

Ասենք դա մի առանձին նշանակութիւն էլ  
չունի, որովհետև եթէ գտնւի էլ մի մարդ, որը

կարողանայ տիեզերքի տարածութիւնը չափել,  
միևնոյն է, ուրիշ մարդիկ չեն ըմբռնի նրա  
ասածը:

Այդ տիեզերական տարածութեան մէջ իր  
սովորական ճանապարհորդութիւնն էր կատարում  
երկիրը. նա շըջել էր երկար, երկար տարիներ և  
շարունակում է շըջել մինչև այսօր էլ: Նա շըր-  
ջում էր արեգակի շուրջը, շարունակ պտտում  
էր հա պտտում նրա չորս կողմը: Նրա տեղ  
մարդ որ լինէր, վաղուց արդէն գլուխը պտոյտ  
եկած կը լինէր, բայց երկրի գլուխը չէր պտտում:  
Նա սովորել էր իր այդ պտոյտին և միևնոյն ժամա-  
նակ դա այնքան էլ փոքրիկ զբոսանք չէր, ամ-  
բողջ մի տարի էր տեսում: Եւ հէնց որ մի շըջան  
անում վերջացնում էր, իսկոյն սկսում էր մի  
նոր շըջան:

Եւ այդ դեռ բոլորը չէ: Երկիրը բացի այդ,  
իսկ գժի պէս, պտտում էր նաև ինքն իր շուրջը,  
այն փոքրիկ շան լակոտի նման, որ ուզում է իր  
պոչի ծայրը բռնի: Ասենք այդ բանի. վրա նա  
քսանուչորս ժամից աւելի չէր գործածում: Եւ  
նրա համար էր նա այդ բանը անում, որ արե-  
գակը կարողանար ամեն կողմից հաւասարապէս  
լուսաւորել իրեն: Այն կողմը, որ արեգակի հա-  
կառակն է դարձած, չէ որ միշտ մութ դիշեր է  
լինում: Եւ եթէ երկիրը միշտ եւրոպայի, Ա-  
սիայի և Աֆրիկայի կողմը դարձրած լինէր արե-

գակին, այն ժամանակ ամերիկացիք երբէք չը  
պէտք է վեր կենային իրենց անկողիններից:

Դէ, արդէն տեսնում էք որ երկիրը շատ  
հոգս ունէր: Բայց դրանցից զատ նա մի հոգս  
էլ ունէր:

Նա պէտք է հսկէր՝ հետեւ նաև լուսնին:  
Ճշմարիտ է՝ նեղն ընկած տեղը լուսինը ինքն  
էլ կարող կը լինէր իր գործը տեսնել. Նա ու-  
րիշ բան ու գործ չունէր բացի այն, որ երկրի  
նման շարունակ ինքն իր շուրջը պէտք է պըտ-  
տէր և էլ պէտք է զբոսնէր, վազէր երկրի  
շուրջը, ինչպէս երկիրը արեգակի շուրջն էր  
զբոսնում:

Լուսինը շատ փոքր էր երկրից և ոչ մի բա-  
նի մասին ոչ իր կարծիքն ունէր, ոչ էլ կարող  
էր ձայն հանել: Այդ պատճառով երկիրը միշտ  
հրամայելով էր խօսում նրա հետ: Իսկ լու-  
սինն էլ յաճախ ջգրացնում էր նրան ինչպէս որ  
կարողանում էր:

Այդ բանը մեծ մասամբ ի հարկէ նրանից  
էր առաջ գալիս, որ նրանք շատ մօտիկ էին ապ-  
րում իրարից, իսկ միւս աստղերը այնքան հե-  
ռու էին նրանցից, որ չէր կարելի որևէ յարա-  
բերութիւն ունենալ նրանց հետ: Ինքներդ գիտէք,  
որ երբ երկուսը պէտք է անբաժան իրար հետ լինեն,  
չէ որ հեշտութեամբ առաջ են գալիս ամեն տե-  
սակ վէճեր ու թիւրիմացութիւններ:

Բայց լուսինը կանոնաւոր կերպով ամիսը մէկ անգամ լրանում էր։ Այն ժամանակ նա զընջրաւում էր իր ամբողջ կլոր երեսով և դրանով երկրի կատաղութիւնն էր բերում։ «Ի՞նչպէս է փայլում, տեսէք է, այն ողորմելի դատարկապորտը» ասում էր այն ժամանակ երկիրը, «Երեկի ինքն իրեն մի անշարժ աստղ է կարծում»։



Բայց լուսինը ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում երկրի խօսքերի վրա և շարունակում էր աչքերը չռել, ծամածութիւներ անել—քանի դեռ լրացած էր։ Այն էլ ճշմարիտ է, որ այդ բանը այնքան էլ երկար չէր տևում։ Լուսինի դէմքը ամեն գիշեր մաշտում էր, ձգւում, կարծես թէ

հարբելուց յետոյ գլուխը ցաւելիս լինէր, վերջի վերջոյ նա բոլորովին թագնւում էր, բայց իսկոյն նորից յայտնւում և շարունակ աւելի ու աւելի մեծանում, մինչեւ որ կը կին լցւում լրանում էր։

—Հաւասարաշափ ես արդեօք շրջում դու, —հարցը մի անգամ երկիրը։

—Անշուշտ, —պատասխանեց լուսինը։

—Յոյս ունեմ, ինչպէս հարկն է հաշւում ես քո ճանապարհը, —շարունակեց երկիրը։ —Զըմոռանաս, որ մինչև որ ես մէկ անգամ արեգակի չորս կողմը պտտւեմ, դու պէտք է տասն և երեք անգամ պտտւես իմ շուրջը։ Թէ չէ օրացոյցի կարգը տակն ու վրա կը լինի։

—Ես արդէն շատուց է որ վազում պտըտւում եմ, առանց քեզ ինքս էլ լաւ գիտեմ ինչ պէտք է անեմ, փնթփնթան քափթառ, —պատասխանեց լուսինը։ Այդ օրը հէնց ճիշտ նըրա լրման ժամանակն էր, դրա համար էլ լեզուն երկարացը էր։

Լուսինը մի ուրիշ կերպ էլ էր ջգրացնում երկրին։ Երբեմն սկսում էր երկրի վրա եղած ջուրը ամբողջ ուժով իր կողմը քաշել, այնպէս որ մի տեղ ջուրը բարձրանում փքւում էր, իսկ միւս տեղ իջնում նստում էր։ Եւ այնտեղ, ուր ջուրը բարձրանում փքւում էր, հեղեղը ամեն բան տակովն էր անում, այն ինչ միւս

կողմում նաւերը խրւում նստում էին ծանծառութիւնից:

Եւ այն մարդիկ, որոնք ենթարկուում էին այդ գժբախտութեանը, անիծում, նզովում, երդում էին, որ այս երկրի վրա ապրելը ուղղակի անտանելի էր դառնում: Պարզ է, որ այդ բանը գրգռում էր երկրին—չէ որ իր ձեռքից ոչինչ չէր կալիս: Եւ առաջւանից աւելի էր զայրանում լուսնի վրա:


—Է, էլի՞ լցւեցիր, լրացար, անպիտան արարած,—ասում էր նա լուսնին. — Ես միայն այն կուզէի իմանալ, թէ դրանից ինչ օգուտ ունես:

Այդպէս նրանք տարիներ շարունակ վիճում էին հա վիճում՝ բնութիւնից իրենց սահմանած ճանապարհորդութիւնը կատարելով: Իսկ նրանց շուրջը շարժում էին ուրիշ մոլորակներ, որոնք նոյնպէս իրենց հոգսերն ու իրենց վշտեցն ունէին: Իսկ բոլորի մէջտեղը կանգնած էր արեգակը և իր փայլով լուսաւորում էր բոլորին:

Բայց ահա մէկ անգամ—դա մարտի կէսերին էր—այդ կողմերում մի բոլորովին անծանօթ աստղ յայտնւեց: Ոչ երկիրը և ոչ էլ լուսինը մինչև այդ դեռ երբէք չէին տեսել նըրան և կարող էք երևակայել թէ ինչ մեծ եղաւ նրանց զարմանքը: Օտար աստղը բոլորովին մի առանձին տեսակի էր. նա ամենեին նման չէր

միւս աստղերին. նա երկար, փայլուն պոչ ունէր:

—Տէր Աստւած, այս ինչ տարօրինակ արարած է, —բացականչեց երկիրը: Լուսինն էլ ձայն տւաւ. «Ես գեռ երբէք այսպիսի բան չեմ տեսած»:



Քիչ մնաց երկիւղից ու զարմանքից, տեղն ու տեղը կանգնած մնային:

Այդ միջոցին անծանօթ աստղը շարունակ մօտենում էր հա մօտենում և երկիրը արդէն վախենում էր, չըլինի թէ յանկարծ այդ աստղը իր վրա ընկնի: Երբ այնքան մօտեցաւ,

որ կարելի էր խօսել նրա հետ, երկիրը աղաղաշ կեց. «Կաց, ի՞նչ ես անում դու այստեղ, իմ ճանապարհին. ով ես, որտեղից ես գալիս. ուր ես գնում»:

«Մէկ անգամից շատ հարցեր ես տալիս», պատասխանեց օտար աստղը:

— Բայց ով ես դու, — նորից հարցը երկիրը:

«Ես մի փոքրիկ գիսաստղ եմ միայնա, ասաւ աստղը. «Իսկ դու ով ես»:

— Ես երկիրն եմ: Դու պէտք է լսած լինէիր իմ մասին,

«Երբէք չեմ լսել», պատասխանեց գիսաստղը: «Ես առաջին անգամն եմ այստեղ, ձեր կողմէրի ոչ մի աստղի հետ ծանօթ չեմ»:

— Օ՛, որ այդպէս է դու շատ լաւ տեղն ես ընկել, — ասաւ գոռոզութեամբ երկիրը: — Ճիշտ է, սովորութիւն չունեմ պարծենալու, միայն թէ մի բան պէտք է ասեմ քեզ, որ բոլորիցս ես ամենանշանաւորն եմ:

«Ուրեմն, ճիշտ որ շատ աջող տեղ եմ ընկել», — մտածեց գիսաստղը, «Դէ՛, շուտ արա պատմիր ինձ: Ես ժամանակ չունեմ, չեմ կարող երկար մնալ և ծուլութիւն անել»:

— Բայց մենք էլ բաւական արագ ենք վազում, — մտերմաբար ասաւ երկիրը: — Ես ուզում եմ մի բան առաջարկել քեզ. արի զբոս-

նենք միասին, մէկ անգամ պտտւենք արեգակի շուրջը: Այդ միայն մի տարի կըտեսի. մենք կարող ենք առանց շտապելու, հանգիստ զրոյց անել:

«Օհօ», — քմծիծաղ տալով պատասխանեց գիսաստղը. «այդ է, որ ասում ես արագ: Ես բոլորովին այլ հասկացողութիւն ունեմ ժամանակի մասին: Դէ շտապիր և պատմիր, թէ ովքեր կան այս կողմերում»:

— Բայց նախ խոստացիր, որ շրջանկատու զգոյշ կը լինես և չես ընկնի իմ վրա, — ասաւ երկիրը:

Այս խօսքերի վրա աստղը այնպէս սաստիկ ծիծաղեց, որ նրա պոչը երեքտակ ճաքճքւեց:

«Հօ՛, կը նշանակի դու վախենում ես որ ես կարող եմ գըլըխկոնձի՞ գալքեզ վրա: Հանգստացիր: Ես բոլորովին թեթև եմ, օդային եմ և եթէ ընդհարւեմ էլ քեզ նման վիթխարու հետ, հազար կտոր կը լինեմ»:

— Ա՛խ — բացականչեց երկիրը ոգեսրւած. — ուրեմն դու միայն կրակ ես: Ես էլ մի ժամանակ այդպէս եմ եղել:

«Բայց երևի այդ շատ վաղուց էր», ասաւ գիսաստղը կասկածանքով. «Ինձ այնպէս թւաց թէ այժմ դու բենոիդ վրա մի մեծ սառցէ գղակ ունես ծածկած»:

— Այդ մէկը ճիշտ է, — պատասխանեց եր-

կիրը. — աւելին կասեմ. ամեն մի բեեռիս վրա մի մի գտակ ունեմ. բայց դա ոչինչ որ ոտքերս ու գլուխս ցըտի մէջ են, միայն թէ ստամոքսիս մէջ բաւականին տաքութիւն լինի:

«Այն, բայց ո՞րտեղ է կրակդ», — հարցը եց գիսաստղը:

— կրակը — իմ մէջն է, — պատասխանեց երկիրը: — Տես, այս ըոպէիս ցոյց կը տամ քեզ:

Եւ իսկոյն իր երկու ամենամեծ հրաթուխներից կրակ դուրս ժայթքեց: Ամեն կողմ անհամար կայծեր փռւեցին:

«Այն, այն», նկատեց գիսաստղը. «Ճիշտ որ դեռ էլի մի քիչ կրակ է եղել մէջդ»:

— Մի քիչ, — բացականչեց երկիրը վիրաւորւած: — Ես քեզ այ ինչ կասեմ. ամբողջ փորս կրակով լիքն է: Հէնց այդ է որ ինձ այնքան հետաքրքրական է դարձնում: Գիտես ի՞նչ... Ես էլ մի ժամանակ քեզպէս դատարկ, օդային, թափանցիկ մի անհատ էի: Բայց խելքս գլուխս հաւաքեցի, ինքս ինձ ձեռքքս առայ և աւելի ու աւելի խտանում էի, մինչև որ վերջապէս ծածկը ւեցի հաստ կեղեռվ: Եւ այժմ ես միայն իմ հըրաթուխների միջոցով եմ կարող կրակ դուրս ձգել: Բայց այնուամենայնիւ իմ մէջ կրակ կայ:

«Այդ կեղեռ պէտք է որ խանգարելիս լինի քեզ», նկատեց գիսաստղը:

— Ի՞նչ ասեմ. ի հարկէ, — պատասխանեց եր-

կիրը, — բայց ես հետզհետէ վարժւեցի այդ բանին: Իսկ այժմ նրա վրա ապրում են մարդիկ: «Մարդիկ», հարցը եց գիսաստղը. «Դրանք ի՞նչ բան են»:

Երկիրը մտածկոտ քորեց իր հիւսիսային կողմի բեեռի մօտ, և այդ բանից իր սառցէ գդակը մի քիչ շարժւեց, մի քանի ահագին կտորներ գդակից պոկւեցին և սառցակոյտերի պէս լող տւին դէպի ծովը:

— Այն, այն, — ասաւ երկիրը. ճշմարիտն ասած, դրանք մի տեսակ պարագիտ են»:

«Թոնհ», բացականչեց գիսաստղը:

Երկիրը, կարծես թէ մտածման մէջ, մի կարճ ժամանակ լոեց և յետոյ ասաւ. «Գիտե՞ս, նրանք այնպէս են սողում իմ վրայով, որ երբեմն ինձ թւում է թէ պիտի խելագարւեմ: Եւ որքան ժամանակի ընթացքում շատանում են, այնքան աւելի վատ եմ դառնում: Նրանք դէսից դէնից հետախուզում են ինձ, փորում, փորփորում են, ածուխ, մետաղ և զանազան հարկաւոր բաներ են որոնում: Երկաթէ գծեր են կապում իմ վրա և շոգու օգնութեամբ ման են գալիս. ամենամեծ սարերիս միջով ծակեր են բաց անում, գետերիս վրա կամուրջներ են ձգում: Իսկ իրենց մասին էլ ասում են թէ երկրիս, այսինքն իմ թագաւորներն են:

«Երեակայում եմ, թէ ի՞նչքան չը պիտի

դուր գալիս լինի մի աստղի, որ այդ տեսակ արարածներ ինչ ուզեն իր գլխին անեն», — նկատեց գիտաստղը: «Միթէ չես կարող վրայիցդ թափ տալ նրանց»:


— Փոքրձեցի, — պատասխանեց երկիրը, — և այն էլ ոչ թէ մէկ, այլ մի քանի անգամ, և զանազան միջոցներով: Հրաբուխներիցս ահազին կրակ ու մեծ մեծ շիկացած քարեր եմ ժայթքել և ամբողջ քաղաքներ ծածկել: Շատ անդամ փոթորիկներ եմ արել և հազարաւոր մարդիկ խեղդել: Իսկ երբ բռլորովին անամօթ են դառնում ու էլ ոչ մի պատկառանք չեն ունենում դէպի ինձ, մի լաւ թափահարում եմ կեղես և երկրաշրժ անում:

«Է՞, միթէ այդ էլ չի օգնում»:

— Ասենք օգնում է, — նկատեց երկիրը: — միայն շատ կարճ ժամանակով: Կարծում եմ, որ չափազանց շատ են բազմացել: Վաղուց պէտք է այդ սկսած լինէի, երբ գեռ այսքան բազմացած չէին և այսչափ խորամանկ: Թէ չէ հիմա, երբ որ մի քանի հազար մէկ անգամ խեղդում եմ կամ կրակով մոխիրով ծածկում և այն է յոյս եմ ունենում, թէ նրանց ընտանիքները ցըտից ու վշտից կը կոտորւեն, մէկ էլ տեսնեմ՝ նրանց համար օժանդակութիւն են հաւաքում, միթթարում են, օգնում են և մի երկու տարուց յետոյնորից լցում են ինձ վրա, ինչպէս առաջ էր:

«Մինչև այսօր գեռ ոչ մի այդպիսի բան չեմ լսել», — ասաւ գիտաստղը: — «Չեմ հասկանում, ի՞նչպէս ես այդ բռլորը տանում»:

— Ի՞նչ անեմ ապա, — աղաղակեց երկիրը: — Երբէք չեմ ազատւի նրանցից: Ուսումնասիրել են ինձ, մի բևեռիցս մինչև միւս բևեռս համարեա ոչ մի կէտ չեն թողել իմ ազատ տրամադրութեան



տակ: Ամեն կողմից չափել չափչփել ու նկարագրել են... Շատերը իրենց սեղանների վրա մի գունդ ունեն, որ պէտք է ինձ նման լինի: Իմ մակերեսոյթի ամեն մի քունջ ու պուճախը դիտում զննում են այդ գնդի վրա: Առաջուց հաշում են, թէ երբ փոթորիկ կամ որոտ, երկ-

բաշարժ պիտի լինի... իրենց պատերի վրա այնպիսի գործիքներ անեն կախած, որ պատմում են նրանց այդ ամենի մասին։ Տեսնո՞ւմ ես, էլ ինչ կարող եմ նրանց անել։

«Ես այդ իհարկէ չը գիտէի», — ասաւ գիտավոր, — «Մի բան գիտեմ միայն. ես որ քո տեղը լինէի, — ես ոչ մի կերպով չէի տանի մի այդպիսի բան»։

Երկիրը արհամարհանքով հըրհըռաց։

— Օհօ, — ասաւ նա, — «մեծ բան մի երևակայիր քեզ։ Մի բան ասեմ։ հէնց այս վայրկենիս, երբ ես ու դուն այստեղ զրոյց ենք անում, իմ մարդիկը արդէն գտել են քեզ։ Նրանք նայում են քեզ իրենց հեռաղիտակներով, հաշում են քո ճանապարհը, քեզ անուն են տալիս և քո մասին ամբողջ գրքեր են զրում։ Այսինքն, այդ բաներն անում են նրանցից ամենախելօքները, իսկ յիմարները վախենում են քեզնից և կարծում են, թէ եկել ես տիեզերքի վախճանն ազդարարելու։

«Իսկ ովքեր են այդ յիմարները», — հարցրեց գիտաստղը։

Երկիրը՝ ծոծրակը քորելով, իր սառցէ գդակը այնպէս շարժեց, որ Ատլանտեան ովկիանոսի կէս երեսը լցւեց սառցակոյտերով, և շփոթւած պատասխանեց։

— Շատ լաւ կըլինէր, որ այդ մասին չը հարցնէիր ինձ։

«Ներողութիւն եմ խնդրում», — ասաւ գիտավոր։ «Գուցէ դա ընտանեկան գաղտնիք է»։

— Ո՛չ, դա գաղտնիք չէ, — պատասխանեց երկիրը, — բայց մինչև այժմս էլ ես ոչ մի կերպ չը կարողացայ իմանալ, թէ ովքեր են իսկապէս այդ յիմարները։ Որ յիմարներ կան, այդ գիտեմ։ Եւ շատ կան։ Բայց այնքան էլ հեշտ չէ ջոկել, թէ իսկապէս ով է խելօք, ով յիմար։ Նրանցից ամեն մէկը իրեն խելօք է կարծում, իսկ բոլոր միւսներին յիմար։

«Որ այդպէս է, երեկի նրանք բոլորն էլ յիմար են», — նկատեց գիտաստղը։

Երկիրը մարդու փոխարէն իրեն վիրաւորւած զգաց։ Նա մտածեց, որ երեկի ինքը չափագանց բացսիրտ է խօսում այդ բոլորովին օտար աստղի հետ, որին չէ որ համարեա թէ չի ճանաչում և որը բացի այդ թեթևամիտ մէկն է երեւում, և ոչ թէ մի լուրջ բան։

Արժանաւորութեամբ լի եղանակով երկիրը պատասխանեց։

— Իսկի էլ չէ, իմ բարի գիտաստղ, իսկի էլ չէ, Բայց գիտես, ինչ ենք խօսում այնպիսի բաների մասին, որոնցից դու ոչ մի հասկացողութիւն չունես։ Ես առհասարակ չեմ սիրում պարծենալ, բայց բարեկամաբարութիւնը ուշադրու-



թիւնը հրաւիրում եմ այն բանի վրա, որ ես անկասկած ամենահետաքրքրական աստղն եմ։ Շուրջդ նայիր, ինչքան աչքդ կտրում է ամբողջ տիեզերական տարածութեան մէջ ինձ հաւասար ոչ մի աստղ չես գտնի։ Նայիր Արիւսեակին, որ փայլում է այնտեղ վերևում, Լուսընթագին, Հրատին և միւս բոլոր աստղերին, որոնց անուններն անթիւ անհամար են, և որոնք ինձ նման վագում են արեգակի շուրջը։ Իսկ յետոյ ուշադրութեամբ գիտիր ինձ։ Նայիր իմ խոր-խոր, կապուտակ ծովերին, հաճարի անտառներին և արմաւենու պուրակներին։

«Ճիշտը խոստովանւեմ, ոչ մի այդպիսի բան չեմ տեսնում», ընդհատեց նրան գիսաստղը։ «Իհարկէ գուցէ ճիշտ է այն բոլորը, ինչ որ դու ասում ես, բայց ինձ այնպէս է երևում, իրը թէ ամբողջովին փաթաթւած ես մշուշի քօղով։ — Ա՞խ, հա, — ասաւ մի քիչ շփոթւած երկիրը. — ես բոլորովին մոռացայ այդ մասին։ Դա իմ մթնոլորան է։»

«Զարմանալի է, այդ ինչքան տեսակ տեսակ բաներ ես ունեցել... կեղե, մարդ, մթնոլորտ. . . .

— Գիսաստղ, — սրտնեղութիւնից աղաղակեց երկիրը. — լսիր, ճշմարիտ է որ ես մի քիչ առաջ ասածս աստղերի հետ արագ սլանում եմ արեգակի շուրջը, այն էլ ճշմարիտ է որ ես ամենափոքր աստղերիցն եմ։ Բայց դրա փոխարէն

հաւատացած եմ, որ ես եմ ամբողջ տիեզերքի ամենակարևոր կէտը, հաւասարակշութեան իսկական կենդրոնը...»

Գիսաստղը պատասխանեց։

«Այդ պարծենկոտութիւնը քեզ բոլորովին խելքից հանել է։ Այդ պարծենկոտ ճառդ շարունակելուց առաջ, մի քիչ նստիր, հանգստացիր։

— Ես նստեմ, հանգստանամ, — հարցըեց երկիրն վիրաւորւած. — այդպիսի մի բան որ անեմ, հօ այն է վերջա եկել է։ Զէ որ ամեն ինչ հաստատւած է այն բանի վրա, որ ես ճշտութեամբ կտրում եմ իմ ուղին արեգակի շուրջը։ Բացի այդ, ես պէտք է նկատեմ քեզ, որ ամեննեին չեմ պարծենում։ Իրօք որ, ես ամենանշանաւոր աստղն եմ... թէկուզ հէնց մարդու շնորհիւ։ Ոչ մի աստղ մի այդպիսի բան չունի... Բայց ինչ է քեզ պատահել. դու փախչում ես ինձնից։

«Այն, փախչում եմ։

— Բայց ինչու, — տիւրութեամբ հարցըեց երկիրը. — Միթէ չես կարող մէկ երկու տարի մնալ այստեղ։ Հիանալի զըոյց էինք անում։ Կը հաւատաս, ոչ մի բաւականութիւն չեմ ստանում դարերից ի վեր շարունակ միւնոյն ճանապարհով շըջելուց, շարունակ միշտ միայն այս միւնոյն յիմար լուսնի հետ լինելուց։

«Ո՞րն է այդ լուսինը», հարցըեց գիսաստղը։

—Այս այն պառաւը, որ երկում է այնտեղ, —պատասխանեց երկիրը. —դունկատեցի՞ր, որ շարունակ զբօնում է իմ շուրջը: Դա մի ողորմելի աստղ է, որ իր ծառայութիւնը վերջացրել՝ կենսաթոշակով է ապրում: Ես նրան խղճացի և ընդունեցի ինձ մօտ, երբ նա անօգնական թափառում էր տիեզերքի տարածութեան մէջ: Այժմ բոլորովին այրուել սառել է և պառաւութիւնից վերջնականապէս խելքը կորցրել է. մի խօսքով մի թշւառ արարած է, որին ամենայն արդարութեամբ պէտք էր անկելանոց ուղարկել: Բայց այս կողմերում մի սովորութիւն է դառել կողքին մի լուսին պահելը: Լուսնթագը դրանցից նոյն իսկ հինգ հատ ունի. Բայց ես դա յիմար նախապաշարմունք եմ համարում:

«Մնաս բարե», — աղաղակեց գիսաստղը: Երկիրը զուր էր աղաչում՝ էլի մի քիչ սպառի: «Չեմ կարող», ասաւ գիսաստղը; «Ես իմ ճանապարհն եմ կտրում և պէտք է շարունակեմ: Բացի դրանից ձանձրացը ինձ քո պարծենկու տութիւնը»:

—Նորից երբ կըյայտնաես այս կողմերում: Երեք հարիւր տարուց յետոյց, աղաղակեց գիսաստղը արագ փախչելով և երեքտակ պոչը թափ տալով:

Նա հետզհետէ փոքրանում էր ու փոքրանում: Վերջապէս բոլորովին անհետացաւ:

«Կեցցես», բացականչեց լուսինը. «Ինչ արագ է վազում է, ինչ պոչ ունի: Երկի բոլորովին այլ կեանք է վարում, քան թէ մի ողորմելի մոլորակ»:

—Ի հարկէ, —հեգնաբար պատասխանեց երկիրը: —Նա մօտաւորապէս նոյնպիսի անօգուտ կեանք է վարում, ինչպէս և լուսինը:

Բայց լուսինը լրացած էր և միայն ծիծառեց երկրի խօսքերի վրա:

Անցաւ երեք հարիւր տարի: Գիսաստղը իր խոստման համաձայն եկաւ:

Երկիրը տենչանքով սպասում էր նրա գալուստին և համբերութեամբ հաշում էր իր պտոյտները արեգակի շուրջը: Նա զարդարեց իրեն մանուշակներով և այն բոլոր ծաղիկներով, որ կարող էր արտադրել մարտ ամսին:

Մարդիկ երկրի վրա նոյնպէս այդ օր դիտում էին գիսաստղը, որովհետեւ արդէն հաշուել էին նրա ուղին: Խելօքները ուրախանում էին, որ նորից մի գեղեցիկ ունշանաւոր բան են տեսնելու, իսկ յիմարները երկիւղից վայ էին տալիս իրենց անկողիններում կամ ան ու դողով վազվում էին փողոցներում, խմում, հարըում և ուրիշ զանազան յիմարութիւններ անում:

—Գիսաստղը, —աղաղակեց խելօք մար-

դը, որ կանգնած էր ամենաբարձր աշտարակի վրա, ամենալաւ հեռագիտակը ձեռին և գիսաստղի մասին շատ բան գիտէր.

— «Նայիր, գիսաստղը», — աղաղակեց լուսինը: «Կեցցէ... Դէհ այժմ էլի կարող ենք ուրախանալ»:

— Այս, գիսաստղն է, — բաւականութեամբ աղաղակեց նոյնպէս և երկիրը:

Եւ երբ քիչ յետոյ մօտեցաւ մեծ, փայլուն գիսաստղը, իր երեքտակ ճաքճքած պոչով, երկիրը ողջագուրանքով բարձրացրեց իր սառցէ գգակը: Իսկոյն բոլոր ծովերը լցւեցին սառցակոյտերով և այնպէս ցըտեց, որ յիմարները հաւատացած էին, թէ հասել է աշխարհիս վերջը, նոյն իսկ խելօքները մի քիչ անհանգստութիւն զգացին:

— Բարեւ, բարեւ, սիրելի գիսաստղ, — աղաղակեց երկիրը. — ողջոյն քեզ: Ուրախ եմ, որ տեսնում եմ քեզ նորից ուրախ ու առողջ:

Բայց գիսաստղը ոչ մի բառ չէր պատասխանում:

Երկիրը կրկնեց իր ողջոյնը. «Բարեւ», Բայց այս անգամ էլ պատասխան չըստացաւ:

«Այս ի՞նչ պէտք է պատահած լինի գիսաստղին», ասաւ նա զարմացած: «Չըլինի թէ այնքան ամբարտաւանացել է, որ չի ուզում բարեկել իր հին ծանօթին»:

— Երկի ձեզ չընկատեց... — չարախնդութեամբ մէջ ընկաւ լուսինը, — Մէկ մտածեցէք է, ինչքան չնչին էք:

— Զայնդ քեզ քաշիր. աւելի լաւ է քո պարտականութիւնների մասին մտածես ու քիթդ չը խոթես որտեղ որ պէտք չէ, — բարկացած գոռաց երկիրը և նորից կանչեց. — Գիսաստղ, սիրելի գիսաստղ:

Գիսաստղը ոչ մի ձայն չըհանելով, հանգիստ շարունակում էր իր ճանապարհը:

Այն ժամանակ երկիրը վախեցաւ, չըլինի թէ գիսաստղը արագ անցնի մօտիցը և չաջողւի զըրոյց անել նրա հետ: Նա քիչ էր մնում լաց լինի: Եւ իսկապէս՝ ի՞նչպէս չը վիրաւորւէր. Երեք հարիւր տարի նա ապրել էր այն ուրախ յուսով, որ պէտք է զըրոյց անէր մի հետաքրքիր, խելացի արարածի հետ, և ահա վերջապէս յայտընւել է այդ արարածը ու նոյն իսկ չի էլ ուզում բարեկ տալ իրեն:

— Բարեւ, գիսաստղ, — աղերսակտն ձայնով սկսեց կանչել նա. — Միթէ գու ուզում ես առանց ինձ բարեկելու անցնես, իմ գուան մօտով: Զէ որ ես քո հին բարեկամն եմ, երկիրը. ապա մի յիշիր: Դու ճանապարհորդել ես միլիոնաւոր վերստեր: Եւ միթէ ես ճշմարիտ չէի ասում քեզ. պատահեցիր արդեօք ինձ նման մէկին»:

«Ի՞նչպէս չէ», պատասխանեց գիսաստղը  
սաստիկ արհամարհանքով։


—Հա, —անվստահ հարցրեց երկիրը։ —Որ  
այդպէս է, պէտք է պատմես ինձ այդ ըոլորի  
մասին։ Իսկ առ այժմ ես շատ ուրախ եմ գոնէ  
որ լեզուդ չի պապանձւել։ Դէ... պատմիր...  
Ապա ասա տեսնեմ, թէ տիեզերքի տարածու-  
թեան մէջ որև է տեղ պատահեցի՞ր արդեօք  
այնպիսի խոր, կապուտակ, գեղեցիկ ծովերի,  
ինչպէս են այստեղ ինձ վրա, հաճարի այսպիսի  
հրաշալի անտառների, վայելչակազմ արմաւենի-  
ների այսպիսի պուրակների։

«Հա, հա, հա» — ծիծաղեց գիսաստղը։

—Կամ թէ որև է տեղ դու մարդ տեսան, —  
նորից հարցրեց երկիրը։

Իսկ գիսաստղը շարունակում էր ծիծաղել.  
«Հա, հա, հա, հա, հա» : Ծիծաղից նրա պոչն  
էլ էր շարժւում, գլուխն էլ։ Իսկ երկիրը սաս-  
տիկ վիրաւորւեց։ Եւ սկսեց մտածել թէ ինչով  
կարող է յարգանք ու պատկառանք ներշնչել գիս-  
աստղին, և յիշելով յանկարծ աղաղակեց։ «Գուցէ  
դու որև է տեղ յիմարների էլ պատահեցիր, հմ» :  
— «Հա, հա, հա, հա, հա, հա, հա» : Գիսաստղը  
այնպէս թափով էր ծիծաղում, որ  
մի պոչը պոկւեց։ Այդ բանը տեսնելով երկիրը  
սարսափեց։ Երկրի վրա խելօք մարդիկն էլ,  
որոնք նայում էին գիսաստղին իրենց հեռադի-

տակներով; նոյնպէս վերին դառնիճանի գարզ  
մացան։

Իսկ գիսաստղը շարունակ ծիծաղում էր և  
ոչ մի կերպ չէր կարողանում ծիծաղը պահել։  
Եւ ահա պոկւեց նրա երկրորդ, երրորդ պոչը...  


Եւ յանկարծ գիսաստղը շաղ եկաւ ու ցրւեց այս  
ու այն կողմը։

Ամբողջ տարածութիւնը լցւեց կայծերով և  
նրանցից մի քանիսը, մեծ քարերի պէս, ըն-  
կան երկրի վրա։ Այդ տեսակ քարերից մէկը  
ընկաւ մի խելօք մարդու վրա, ջարդեց նրա

գլուխն էլ, հեռաղիտակն էլ, ու տափակեցրեց,  
ծեփեց գետնին:


Եւ երբ այդ հրաշալի հրախաղը դադարեց,  
զիսաստղի հետքն էլ չէր մնացել:

—Հպարտութիւնից տրաքւեց,—նկատեց եր-  
կիրը:—Միայն ափսոս որ իր ճանապարհոր-  
դութեան մասին բան չը պատմած մեռաւ:

—Այն, ճիշտ որ ափսոս: Գոնէ մէկ անգամ  
մի խելօք բան կը սովորէիր,—հեգնում էր լու-  
սինը չարակամութեամբ ծամածութիւններ ա-  
նելով. հէնց այդ ժամանակ լրացած էր:

—Մարշ, —բարկացած զոռաց երկիրը:—Լե-  
զուդ կարճ պահիր, շատ մի խօսի և գործդ լաւ  
կատարիր: Մտքիցդ չը դցես—տասն և երեք ան-  
գամ իմ շուրջը. տասն և երեք անգամ, մինչեւ  
որ ես մէկ անգամ արեգակի շուրջը կը շրջեմ:  
Մարշ, թէ չէ օրացոյցի կարգը տակն ու վրա  
կը լինի:





«Հ. Ա. Ս Կ Ե Բ Ի » ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Հեղ. Մելիք-Հայկագեան. Քսան օր գետնի տակ 20 լ.
2. Օսկար Ռւայլդ. Պրինցն ու ծիծեռնակը . . . 20 »
3. Ստ. Լիսիցեան. Քաջ ճամփորդներ . . . . 25 »
4. Աթ. Խնկոյեան. Գիւղացին ու արջը . . . . 25 »
5. Ստ. Լիսիցեան. Քաջ զինւորներ, պիես . . . 8 »
6. Ռ. Պատկանեան. Զախու . . . . . 20 »
7. Ստ. Լիսիցեան. Սոված գայլը . . . . . 10 »
8. Կլաւդիա Լուկաշեիչ. Քեռի Մկօ . . . . . 20 »
9. Կարլ Էլվալդ. Երկիրն ու գիսաստղը . . . .
10. Կալուան. Ֆիօրէ փերին: Ասեղ . . . . .

0004635

Զբի յանելուած «Հասկեր» թ

Դիմել՝ գրավաճառներին կամ Թիֆլիս՝ Ռեդակցիա  
„ԱՇԵՐԻ“

2013 6/96



